ՄԱԹԵՄԱՏԻԿԱ 6-րդ ԴԱՍԱՐԱՆ
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՒԼ 2026-27 թ

Տևողությունը – 2 ժամ 30 րոպե

1. Որքանո՞վ է 105-ի $\frac{3}{5}$ մասը մեծ 60-ի $\frac{5}{6}$ մասից։
   1) 13 2) 15 3) 18 4) 20

2. Երկու բնական թվերի արտադրյալը 7 անգամ մեծ է առաջին թվից և 35-ով մեծ՝ երկրորդ թվից։ Գտեք այդ թվերի արտադրյալը։
   1) 28 2) 35 3) 42 4) 49

3. Օրվա ո՞ր ժամին է, որ օրվա անցած մասը 8 անգամ ավելի է օրվա մնացած մասից։
   1) ժամը 21-ը 2) 21 անց 20 րոպե 3) 21 անց 30 րոպե 4) 21 անց 40 րոպե

4. Գտեք այն երկնիշ թվերի քանակը, որոնց թվանշանների գումարը փոքր է 15-ից։
   1) 81 2) 80 3) 79 4) 78

5. Քանի՞ թվանշան ունի 0 և 1 թվանշաններով կազմված ամենափոքր թիվը, որն առանց մնացորդի բաժանվում է 36-ի։
   1) 8 2) 9 3) 10 4) 11

6. Գտեք 5-ի բազմապատիկ այն եռանիշ թվերի քանակը, որոնցից յուրաքանչյուրի գրառման մեջ գոնե մեկ անգամ հանդիպում է 2 թվանշանը։
   1) 38 2) 36 3) 40 4) 34

7. Կարի արտադրամասում եղած կտորից կարելի էր կարել չափահասի 42 միատեսակ հագուստ կամ մանկական 63 հագուստ, ընդ որում երկու դեպքում էլ կտոր չէր ավելանա։ Այդ կտորից արդեն կարել են չափահասի 8 հագուստ։ Մնացած կտորով քանի՞ մանկական հագուստ է կարելի կարել։
   1) 48 2) 49 3) 51 4) 54

8. Շախմատի առաջնությունում խաղացվեց 90 խաղ։ Գտեք առաջնության մասնակիցների թիվը, եթե հայտնի է, որ ամեն մասնակից մյուսներից յուրաքանչյուրի հետ խաղաց երկուական խաղ։
   1) 9 2) 10 3) 11 4) 12

9. Քանի՞ թվանշան է գրվել գրքի բոլոր էջերը համարակալելիս, եթե հայտնի է, որ այդ գրքի վերջին թերթի էջերի համարների գումարը հավասար է 555-ի։
   1) 714 2) 720 3) 726 4) 732

10. 900-ից մեծ քանի՞ եռանիշ թիվ կա, որոնց թվանշանները ձախից աջ փոքրանում են (օրինակ՝ 921-ը կհաշվենք, քանի որ $9>2>1$, իսկ 922-ը չենք հաշվի, քանի որ $2\not>2$)։
    1) 28 2) 36 3) 40 4) 50

11. Արկղում կա 6 սպիտակ, 10 կարմիր և 13 կապույտ գույնի գնդակ: Առանց նայելու ամենաքիչը քանի՞ գնդակ է պետք հանել արկղից, որ նրանց մեջ լինի որևէ երկու գույնից գոնե 2-ական գնդակ:
    1) 5 2) 9 3) 13 4) 16

12. Էլեկտրոնային ժամացույցը ցույց է տալիս ժամը և րոպեն: Այժմ նրա ցուցմունքն է՝ 11:11: Ամենաքիչը քանի՞ րոպե հետո ժամացույցի ցուցմունքի բոլոր 4 թվանշանները կլինեն իրարից տարբեր:
    1) 111 2) 79 3) 52 4) 49

13. 4 սալորը և 1 խնձորը միասին 1 սալոր և 2 խնձորի չափ են կշռում, իսկ 5 սալորը և 3 խնձորը միասին կշռում են 630 գ: Քանի՞ գրամ են կշռում 1 սալորը և 1 խնձորը միասին:
    1) 150 2) 180 3) 200 4) 210

14. Քանի՞ եռանիշ թիվ կա, որոնց գրառման մեջ մասնակցում է 1 թվանշանը:
    1) 252 2) 260 3) 300 4) այլ պատասխան

15. Արամը նկատեց, որ ընթացիկ ամսվա առաջին և վերջին օրերը կիրակի են: Ի՞նչ օր էր այդ տարվա առաջին օրը:
    1) երեքշաբթի 2) չորեքշաբթի 3) հինգշաբթի 4) ուրբաթ

16. Երբ որդու տարիքը լինի 2 անգամ մեծ, քան հիմա, հոր տարիքը 6 անգամ մեծ կլինի որդու տարիքից: Քանի՞ անգամ է հոր տարիքը մեծ որդու տարիքից:

17. Վաճառողն առաջին գնորդին վաճառեց ունեցած նարինջների $\frac{1}{7}$ մասը, երկրորդին՝ մնացածի $\frac{1}{3}$ մասը: Դրանից հետո նրա մոտ մնաց 12 կգ նարինջ: Վաճառողն սկզբում քանի՞ կիլոգրամ նարինջ ուներ:

18. Եթե եռանիշ թվին աջից կցագրենք 1 թվանշանը, ապա կստանանք 3 անգամ մեծ թիվ, քան ձախից 2 կցագրելիս: Գտեք այդ եռանիշ թիվը:

19. Դասարանի բոլոր աշակերտները շարք են կանգնել: Յուրաքանչյուր շարքում կանգնած են հավասար թվով աշակերտներ: Շարքում կանգնած Լևոնը նկատեց, որ իրենից առաջ կա 2 շարք, իսկ իրենից ետ՝ 1 շարք: Դավիթը նկատեց, որ իր շարքում իրենից աջ կանգնած են 3 հոգի, իսկ իրենից ձախ՝ 4 հոգի: Քանի՞ աշակերտ է սովորում այդ դասարանում:

20. Եթե եռանիշ թվին գումարենք 6, ապա ստացված թիվը առանց մնացորդի կբաժանվի և՛ 7-ի, և՛ 8-ի, և՛ 9-ի: Գտեք այդ եռանիշ թիվը: